



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/7451-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-162-10.02.2022-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը և պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ եզրակացությունը:

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 260 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Սահակյան

Հեռ. 010515826

**«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-162-10.02.2022-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի չափը բարձրացնել՝ 68000 դրամից դարձնելով 80 000 դրամ և ըստ այդմ սահմանել գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նոր նվազագույն չափեր:

Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությունը հայտնում է, որ.

1. ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի համաձայն՝ կառավարությունը մինչև 2026 թվականը քայլեր է ձեռնարկելու նվազագույն աշխատավարձը 85,000 դրամ սահմանելու ուղղությամբ: Նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացումն ապահովվելու է՝ հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները: Այս կապակցությամբ յուրաքանչյուր տարի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման համապատասխան հնարավորության առկայության պարագայում՝ նախատեսվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Այլ կերպ ասած, նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացումն անհրաժեշտաբար պետք է ուղեկցվի համապատասխան տնտեսական **հնարավորություններով՝ որպես լրացուցիչ ծախսի ֆինանսավորման աղբյուր:**

2. Նախագծին կից ներկայացված հիմնավորումից պարզ է դառնում, որ դրանում բացակայում են տնտեսական հիմնարարների տեսանկյունից վերլուծությունները, ինչպես նաև բացահայտված չեն նվազագույն ամսական աշխատավարձի աճի կարճաժամկետ և երկարաժամկետ մակրոտնտեսական ազդեցությունները և ռիսկերը: Մասնավորապես, ներկայացված չէ առաջարկվող փոփոխության ազդեցությունը զբաղվածության,

ստվերային տնտեսության, աշխատանքի արտադրողականության և ներուժային ՀՆԱ-ի վրա:

Օրինակ, նվազագույն ամսական աշխատավարձի չհիմնավորված բարձրացումը կարող է հանգեցնել ՀՆԱ-ի ու զբաղվածության մակարդակի նվազման, ձևավորել գնաճային ճնշումներ և հարկաբյուջետային ռիսկեր: Այս համատեքստում նկատի ունենք, որ նվազագույն աշխատավարձի այսչափ բարձրացումը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ գործատուները անվանական աշխատավարձերը չբարձրացնելու նպատակով կամ կնվազեցնեն աշխատողների աշխատաժամանակը, կամ որ ավելի խնդրահարույց է՝ կազատեն աշխատանքից, սակայն, որոշ դեպքերում շարունակելով աշխատանքային հարաբերությունները պահպանել ոչ ֆորմալ ձևով: Այս իրավիճակը կհանգեցնի նաև բյուջետային մուտքերի նվազման, ինչն էլ ինքնին, ինչպես գիտենք, հանգեցնելու է պետական ծախսերի, այդ թվում՝ սոցիալական ոլորտում իրականացվող, նվազման և սոցիալական լարվածության մեծացման:

3. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը:

2020 թվականի հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացումից հետո պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձը չի փոփոխվել, և ներկայում այն կազմում է նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 74 տոկոսը: Բազային աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի չափերի՝ Օրենքով սահմանված հարաբերակցությունը չխախտելու նպատակով 2020 թվականից Օրենքի 5-րդ հոդվածում կատարվում են ժամանակավոր լրացումներ՝ նախատեսելով բազային աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի այլ հարաբերակցություն: Միաժամանակ, համապատասխան օրենքների անցումային դրույթներով պետական մի խումբ ծառայողների համար սահմանվում են նվազագույն աշխատավարձին հավասար հիմնական աշխատավարձ ստանալու վերաբերյալ երաշխիքներ:

Սակայն նվազագույն աշխատավարձի չափի նոր բարձրացումը անհրաժեշտաբար կրերի նաև բազային աշխատավարձի բարձրացման: Մասնավորապես, նվազագույն ամսական աշխատավարձը 80.000 դրամ սահմանելու պարագայում բազային աշխատավարձը պետք է բարձրացնել առնվազն 29.9 տոկոսով, որպեսզի ապահովվի Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ բազային աշխատավարձ/նվազագույն աշխատավարձ 80 տոկոս հարաբերակցությունը: Հակառակ դեպքում, պետական ծառայողների, ինչպես նաև հանրային իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող մի խումբ աշխատողներ նվազագույն աշխատավարձի չափից ցածր աշխատավարձ կստանան, իսկ միայն այդ խմբի ծառայողների հիմնական աշխատավարձի բարձրացման դեպքում Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պարտականություններին, պատասխանատվությանը համապատասխանող հիմնական աշխատավարձի ապահովման սկզբունքը կխախտվի ավելի մեծ շրջանակի պետական ծառայողների տեսանկյունից:

Պետական մարմիններում աշխատավարձի բարձրացման վերը նշված խնդրին զուգահեռ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նույնաբովանդակ խնդիր է առաջանում նաև պետական այն հիմնարկներում (ՊՈԱԿ), որտեղ նվազագույն աշխատավարձի բարձրացումը ազդեցություն է ունեցել միայն նվազագույնից ցածր աշխատավարձ ստացողների վրա. այս սեգմենտում ևս պաշտոնների հիերարխիկ բուրգի ստորին հատվածում աշխատավարձի գործակիցները խտացվել են, որը դարձյալ բերել է աշխատողի որակավորումից, աշխատանքի պայմաններից, բարդությունից կախված աշխատավարձի տարբերակման սկզբունքի խախտման:

4. Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ Վերանայված սոցիալական խարտիայի նախադեպային վերլուծությունների ամփոփագրում նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցության ցանկալի նպատակը սահմանված է անվանական աշխատավարձի 60%, ընդունելի նպատակը՝ 50% և նվազագույն մակարդակը՝ 40%: 2021 թվականի հունվար-դեկտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 204,048 դրամ, որի 40%-ը կազմում է 82,000 դրամ: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ 2021 թվականին նվազագույն և միջին ամսական անվանական աշխատավարձերի հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետությունում կազմել է շուրջ 46% (93,000/204,000), ինչը գերազանցում է վերոնշյալ 40% ցուցանիշը: Ընդ որում՝ պետք է նշել, որ այն համադրելի է Տնտեսական

համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) անդամ երկրների շրջանում նշված ցուցանիշի միջին մակարդակի հետ և նույնիսկ գերազանցում է որոշ ՏՀԶԿ անդամ երկրների համապատասխան ցուցանիշի մակարդակները¹:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձը համաչափ բաշխված չէ իր միջին մակարդակի շուրջը: Այսպես, վարձու աշխատողների շուրջ 50%-ը ստանում է մինչև 110,000 դրամ աշխատավարձ, ինչով պայմանավորված՝ մեղիան աշխատավարձը ցածր է միջին աշխատավարձից: Ուստի կարծում ենք, որ նախ նպատակահարմար է գնահատել նվազագույն ամսական աշխատավարձի և աշխատավարձի մեղիանի տնտեսապես հիմնավորված հարաբերակցության չափը Հայաստանի Հանրապետությունում: Հակառակ դեպքում առաջարկվող քաղաքականությունը կարող է խեղաթյուրել մակրոտնտեսական համամասնությունները (հավասարակշռությունը աշխատանքի շուկայում)՝ բացասաբար ազդելով աշխատանքի շուկայի ցուցանիշների վրա՝ զսպելով տնտեսական աճը, ինչպես նաև առաջացնելով գնաճային ճնշումներ: Այստեղ ևս նշենք, որ 2021 թվականի նվազագույն ամսական աշխատավարձի և աշխատավարձի մեղիանի հարաբերակցությունը Հայաստանի Հանրապետությունում բարձր է և կազմում է շուրջ 87%²՝ էապես գերազանցելով ՏՀԶԿ երկրների միջինում շուրջ 53% ցուցանիշը:

Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետությունում բարձր է ստվերային զբաղվածության մակարդակը (2020 թվականի ընդհանուր զբաղվածության շուրջ 36%), հետևաբար տնտեսական հնարավորությունների շրջանակից դուրս նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացումը կարող է հանգեցնել ֆորմալ զբաղվածության կրճատմանը:

5. Կարող է թվալ, որ նվազագույն աշխատավարձի բարձրացման արդյունքում պետական բյուջեի եկամտային հարկից մուտքերը կավելանան, սակայն այդպիսի պնդումը միանշանակ չէ, քանի որ այս փոփոխությունը միաժամանակ կարող է հանգեցնել նաև ոչ ֆորմալ զբաղվածության կամ գործազրկության մակարդակի բարձրացմանը: Որպես ասվածի հիմնավորում՝ նշենք այն հանգամանքը, որ ավելի քան 300,000 աշխատող ներկայումս ստանում է 110,000-ը չգերազանցող հաշվարկային աշխատավարձ, ուստի բարձր է այն ռիսկը, որ մասնավոր հատվածում ցածր վճարվող աշխատատեղերի զգալի մասը կկրճատվի, ինչն էլ իր հերթին կբերի պետական բյուջեի եկամտային հարկի

¹ OECD database, <https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=MIN2AVE>

² Չհարկված նվազագույն աշխատավարձը կազմում է շուրջ 93 հազար դրամ, իսկ մեղիան աշխատավարձը գնահատվել է ՀՀ ՊԵԿ տվյալների հիման վրա և կազմում է շուրջ 108 հազար դրամ:

նվազման: Հնարավոր է նաև, որ այդ նվազումը իր մեծությամբ համարժեք լինի այն ավելացմանը, որը կարձանագրվի նվազագույնի բարձրացման արդյունքում ավելի շատ աշխատավարձ ստացողների (պահպանված աշխատատեղերի) գծով:

6. Միաժամանակ հայտնում ենք, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ անձի ամսական համախառն եկամտի՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով հաշվետու ամսվա համար սահմանված չափի 15-ապատիկը գերազանցող գումարից (սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն ամսական շեմ) կամ տարեկան համախառն եկամտի՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ սահմանված չափի 180-ապատիկը գերազանցող գումարից (սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն տարեկան շեմ) սոցիալական վճարներ չեն հաշվարկվում և փոխանցվում (գանձվում): Եթե անձը եկամուտ է ստանում մի քանի աղբյուրից (ստանում է ձեռնարկատիրական եկամուտ և աշխատավարձ), ապա հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարների՝ նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված չափը գերազանցող գումարները (եթե այդպիսիք առկա են) մասնակիցներին վերադարձնելու կարգը սահմանում են հարկային մարմինը և ՀՀ կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը համատեղ հրամանով:

Հաշվի առնելով վերոնշյալը, հայտնում ենք, որ նախագծի ընդունման դեպքում փոփոխությունն ուժի մեջ մտնելու պահից կպահանջվի առնվազն վեցամսյա ժամանակահատված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային կառավարման եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում սոցիալական վճարների ծրագրային ապահովման աշխատանքները կատարելու համար:

Նախագծի ընդունման դեպքում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կավելանան տարեկան կտրվածքով շուրջ 99.1 մլրդ դրամի չափով: Ուստի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը պետք է ընդունի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հաշվի առնելով վերը նշված նկատառումները՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող օրենքի գործող հոդվածները թողնել անփոփոխ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի
նախագծի՝ բյուջեի եկամուտների հական նվազեցման կամ ծախսերի ավելացման
վերաբերյալ**

Նախագծով առաջարկվում է 2023 թվականի հունվարի 1-ից՝ բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի չափը՝ 68.000 դրամի փոխարեն սահմանելով 80.000 դրամ, բարձրացնել գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ առաջարկությունների ընդունման դեպքում կաճեն եկամտային հարկով հարկման բազաները՝ հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը կհանգեցնի պետական բյուջեի եկամուտների ավելացման:

Ընդ որում, եթե ենթադրենք, որ առաջարկությունների ընդունումը հիմնականում կազդի մինչև 80.000 դրամ աշխատավարձ ստացողների վրա և հաշվի առնելով այն, որ աշխատավարձերի բարձրացումը կարող է հանգեցնել վարձու աշխատողների թվի նվազման և ոչ ֆորմալ հատված տեղափոխման, ապա նախագծի ընդունման արդյունքում եկամտային հարկի գծով պետական բյուջեի եկամուտները տարեկան կտրվածքով կաճեն շուրջ 8-9 մլրդ դրամով:

Միաժամանակ, եթե ենթադրենք, որ տեղի չեն ունենա վերանշալ՝ վարձու աշխատողների թվի նվազման և ոչ ֆորմալ հատված տեղափոխման հանգամանքները, և ենթադրենք, որ առաջարկությունների ընդունման դեպքում մոտ 18 տոկոսով (այնքան որքան առաջարկվում է բարձրացնել նվազագույն աշխատավարձի չափը) կբարձրանան մինչև 90.000 դրամ աշխատավարձերը, որի արդյունքում նաև որոշակի կբարձրանան մինչև 500.000 դրամ աշխատավարձերը, ապա նախագծի ընդունման արդյունքում պետական բյուջեի եկամուտները տարեկան կտրվածքով կաճեն շուրջ 16.4 մլրդ դրամի չափով:

Ինչ վերաբերում է ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա ազդեցությանը՝ հայտնում ենք, որ, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջը, ըստ որի՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը չի կարող ցածր լինել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 120 տոկոսը: Բազային աշխատավարձը նվազագույն աշխատավարձի 80%-ի

հաշվարկի կիրառման պարագայում Նախագծի ընդունումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման՝ տարեկան կտրվածքով շուրջ 99.1 մլրդ դրամի չափով:

ՆԱԽԱԳԻԾ

Խ-162-10.02.2022-ԱՍ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «68000» թիվը փոխարինել «80000» թվով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 2. Գործավարձով եւ ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը սահմանել՝

1) աշխատաժամանակի նորմալ տեւողության դեպքում (40-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 478 դրամ.

2) աշխատաժամանակի կրճատ տեւողության դեպքում (36-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 534 դրամ.

3) աշխատաժամանակի կրճատ տեւողության դեպքում (24-ժամյա աշխատանքային շաբաթ)՝ 800 դրամ:»:

Հոդված 3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

Նախագծի ընդունման հիմնավորումը

Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:»

Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:»

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ ներկայումս առկա նվազագույն աշխատավարձի չափը չի լուծում աշխատողների սոցիալական բոլոր խնդիրները: Այն շատ դեպքերում համարժեք չէ աշխատողի կողմից ներդրված ջանքերին: Հարկ է նշել, որ ներկայիս նվազագույն աշխատավարձի չափը չի համապատասխանում նաև Հայաստանում հաշվարկված սպառողական զամբյուղին և սպառողական գների ինդեքսի աճին:

«Այսպիսով, ստանալով 68000 դրամ աշխատավարձ, քաղաքացին ի գործու չէ հոգալ իր ամենապարզունակ կարիքները: Իսկ եթե հաշվի առնենք այն փաստը, որ շատ դեպքերում ընտանիքի անդամներից աշխատանք ունի միայն մեկը, առաջ է գալիս գոյատևելու խնդիրը: Հիմա անգամ ֆիզիկական աշխատանքով զբաղված մարդկանց աշխատավարձը հաշվվում է միջինը 5000 դրամ օրական: Սա յուրօրինակ ցուցիչ է Հայաստանում ձեռավորվող աշխատանք- վարձատրություն համակարգում: Կարծում ենք, որ նվազագույն աշխատավարձը աստիճանաբար պետք է բարձրանա մինչև ամսական 150.000 դրամ մի քանի տարվա ընթացքում: Սա նաև կխթանի աշխատելու շարժառիթը և պատասխանատվությունը¹:»

Այս մեջբերումն արձանագրված է 19.11.2019թ ընդունված ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» այս իշխող քաղաքական ուժի ներկայացրած օրենքի հիմնավորման մեջ:

Իմիջայլոց՝ նույն օրենքի հիմնավորման մեջ նշված է նաև. «ինչպես և ցանկացած տնտեսական բարեփոխում, սույն փոփոխությունները հղի են մի շարք հնարավոր վտանգներով, չձևակերպված զբաղվածություն, սպառողական գների, բյուջետային ծախսերի, բիզնեսի վրա հարկային բեռի աճ, սակայն փոփոխությունների արդյունքում ծագած հնարավոր վտանգները մեծ ազդեցություն չեն ունենա տնտեսության վրա, քանզի ակնկալվող դրական տեղաշարժն ավելի էական է:»:

Սույն նախագծով առաջարկվում է նվազագույն աշխատավարձը դարձնել 80000 ՀՀ դրամ, ինչպես նաև ավելացնել գործավարձով եւ ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը:

Այս օրենսդրական առաջարկի հիմքում դրված են մի շարք տնտեսական հիմնավորումներ, մասնավորապես՝ 2022թ հունվարի 1-ից խմելու ջրի 1 խ/մ-ի գինը թանկացել է 20,47 դրամով: 2022թ փետրվարի 1-ից էլեկտրաէներգիան նույնպես թանկացել է. ամսական մինչև 200 կՎտ/ժ էլեկտրաէներգիա սպառող ընտանիքների համար սակագինը թանկացել է 2.5 դրամով՝ կազմելով ցերեկայինը՝ 46.48, գիշերայինը՝ 36.48 դրամ, 201-400 կՎտ/ժ սպառողների համար թանկացումը կազմել է 4 (ցերեկայինը՝ 48.48, գիշերայինը՝ 38.48 դրամ), 400 կՎտ/ժ-ից ավել էլեկտրաէներգիա սպառողների համար էլեկտրաէներգիան թանկացել է 10 դրամով (ցերեկայինը՝ 53.48, գիշերայինը՝ 43.48 դրամ): Ակնկալվում է նաև գազի թանկացում:

Արդեն տարվա վերջում՝ համավարակով ու հետպատերազմական խնդիրներով ուղեկցված 2021 թվականի ամփոփ տվյալներով՝ Հայաստանում 12-ամսյա գնաճը 7,2 տոկոս է կազմել: Սա վերջին տասը տարիներին գրանցված ամենաբարձր ցուցանիշն է, գնաճը վերջին անգամ պետության սահմանած թիրախային 4 տոկոսի սահմանն անցել է միայն 2014թ-ին: Անցած տարվա ընթացքում միայն սննդամթերքի գնաճը որոշ ամիսներին անցնում էր 17 տոկոսից: Գրեթե այդչափ ավելացել են հագուստի գները: Սննդամթերքի և

ոչ ակոհոլային խմիչքների գնաճը կազմել է 12,9 %, այդ թվում՝ բանջարեղենի ապրանքախմբում գնաճը կազմել է 40%, շաքարի և շաքարավազի ապրանքախմբում՝ 19.8%, հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում՝ 10.2%, կաթնամթերքի, պանրի և ձվի ապրանքախմբում՝ 11.2%, մսամթերքի ապրանքախմբում՝ 7.5%: Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ.-ի դեկտեմբերի գնաճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 14.7%, ձկան և ծովամթերքի ապրանքախմբում՝ 31.4%:

Հարկ է նշել, որ աշխատավարձի ինդեքսավորման իրավական մեխանիզմի բացակայության դեպքում գնաճը էլ ավելի է բարդացնում ՇՕ՝71Ը-19-ի և 44-օրյա պատերազմի արդյունքում ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մեր հայրենակիցների համար իրենց ամսական կարիքների պատճառ կերպով հոգալու հնարավորությունը:

Ներկայացված գնաճի պայմաններում քաղաքացիների արժանապատիվ կյանքը և աշխատավարձը ապահովելու համար առաջարկվում է բարձրացնել նվազագույն աշխատավարձը՝ այն առնվազն դարձնելով 80000 ՀՀ դրամ:

Նախագծի ընդունումը իր հերթին կհանգեցնի նաև ոչ ֆորմալ աշխատողներին հարկային դաշտ բերելուն, ինչն էլ որոշակիորեն կնպաստի ստվերային գործունեության դեմ պայքարին:²

Հայաստանի գործատուների միության՝ ՀՀ-ում ոչ ֆորմալ տնտեսության վերաբերյալ 2021թ. գեկույցում, ի թիվս այլոց, նշված է նաև նվազագույն աշխատավարձի ցածր լինելը որպես ֆորմալացման հիմնախնդիր, քանի որ նման աշխատավարձի պայմաններում քաղաքացիները համեմատության մեջ նախընտրում են չգրանցված աշխատանքը, որն ապահովում է ավելի

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում վերջիններս նշել են, որ կիսում են նախագծով հայտնված տեսակետը, և անհրաժեշտ է նվազագույն աշխատավարձի բարձրացումը (ինդեքսավորումը):

Հարկ է նշել, որ թեև նախագիծը իրենից ենթադրում է ծախսերի ավելացում, սակայն աշխատավարձի բարձրացված մասը՝ 12000 ՀՀ դրամը, ծախսերի և դրանց արդյունքում ձևավորվող հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների միջոցով կրկին վերադառնալու է պետական բյուջե:

Բացի այդ, Նվազագույն աշխատավարձի բարձրացման անհրաժեշտության մասին է վկայում նաև առաջանցիկ գնաճը, որի հետևանքով 2021 թ-ին սպառողական զամբյուղի արժեքը (71571) դրամ գերազանցել է նվազագույն աշխատավարձի չափը:

Հարկ է նաև նշել, որ վերանայված սոցիալական խարտիայի նախադեպային վերլուծությունների ամփոփագրում նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը սահմանված է 60%՝ որպես ցանկալի նպատակ, ընդունելի՝ 50% և 40%՝ որպես նվազագույն չափ: Այս առնչությամբ նշենք, որ 2021 թ դեկտեմբերի միջին աշխատավարձը կազմել է 255663 դրամ, որի 40%-ը 102000 դրամն է, իսկ 2021 թ հունվար-դեկտեմբերին միջին աշխատավարձը կազմել է 204048 դրամ, որի 40%-ը կազմում է 82000 դրամ:

Հաշվի առնելով նաև նախագծի ընդունման դեպքում ակնկալվող ծախսերի մեծացումը, նախատեսվել է դրա ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ՝ 2023թ. հունվարի 1-ը:

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում՝

1. Նվազագույն աշխատավարձը կգերազանցի սպառողական զամբյուղի արժեքը՝ լուծելով սոցիալական կարետրագույն խնդիր:
2. Նվազագույն աշխատավարձի աճով կբարձրանա նաև միջին աշխատավարձը:
3. Նվազագույն աշխատավարձ ստացող քաղաքացիներն ավելի գնողունակ կդառնան, ինչը կհանգեցնի պահանջարկի աճին, որն էլ իր հերթին կբերի առաջարկի աճին:
4. Կկրճատվի աշխատավարձերի ոլորտում մասնավոր եւ պետական հատվածների տարբերությունը:
5. Ավելին վճարելու պատրաստակամության պարագայում գործատուն հնարավորություն կունենա աշխատանքի ընդունել ավելի բարձր որակավորմամբ մասնագետների:
6. Կձեւավորվի մրցակցություն նաև գործատուների միջեւ, որոնք կպայքարեն հմուտ կադրերի համար, այդ մրցակցության արդյունքում կաճեն աշխատավարձերը:
7. Լուծվելու է ներդրված ջանքի եւ ստացված աշխատավարձի համարժեքության խնդիրը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 260 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՉԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-162-10.02.2022-ԱՍ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.03.2022
ՀԱՎԱՍՏԱԿԱՑ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ